Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

<<Հանրակրթականդպրոցներիուսուցիչներիևուսուցչիօգնականներիդասավանդմանիմտություններիզարգացման ապահովում>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ԲերդիԿոստյա Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ ՈՒսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ։

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան
Կատարող՝ Նաիրա Գրիգորյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Համագործակցությունը՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման միջոց: ……5

1.1Ուուցչի համագործակցության ընդհանուր բնութագիր 5

1.2. Համատեղ դասավանդումը՝ որպես համագործակցության մոդել:..... .6

Համատեղ դասավանդման դերը ներառական կրթության մեջ.....6

1.3. Ուսուցչի օգնականը՝ որպես համատեղ դասավանդող:Ուսուցչի օգնականի համագործակցությունն ուսուցչի և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ: …… 7

Գլուխ 2. Համատեղ դասավանդման գործնական կիրառում՝ որպես համագործակցության մոդել:..... 11

Եզրակացություն..... 16

Գրականության ցանկ.....17

Ներածություն

Հետազոտական աշխատանքում ներկայացնում եմ «ուսուցչի համագործակցութ յունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով» թեման , որտեղ քննարկվում է համագործակցության մի շարք մոդելներ:

Ուսուցչի համար զարգանալու, փորձի փոխանակման կարևոր աղբյուր է գործընկերների հետ համագործակցումը, որն օգնում է ուսուցիչներին զարգացնելիրենց մասնագիտական կարողունակությունները: Ուսուցման արդյունավետությունը ապահովելու համար հատկապես կարևոր է համագործակցությունը փորձառու ուսուցչի հետ: Քանի որ արհեստավարժ ու բանիմաց ուսուցիչը կարողանում է հետաքրքրել սովորողին, կառավարել դասն ու սովորողների վարքը: Դպրոցում հաջող վերափոխումների պայմաններն են տարբեր դպրոցների ուսուցիչների ստեղծագործական համագործակցությունը, գործընթացում նոր մոտեցումների ներդրումը, ուսուցիչների կանոնավոր շփումը ցանցային մանկավարժական համայնքում:

Մասնագիտականզարգացմանազդեցիկմիջոցէդպրոցիներսումուսուցիչներիհամագործակցությունը:Այսմոտեցմանդեպքումստեղծվումենուսուցչականխմբեր, որոնքհամատեղմշակումենդասիպլաններ, վարումնդիտարկումենդասեր, ապակատարումդասերիվերլուծություններ:Նմանդեպքերումուսուցիչներըառաջարկներևդիտողություններենստանումիրենցգործընկերներիցևհնարավորությունունենումբարելավելուիրենցաշխատանքը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է զարգացող աշխարհում ուսուցչի առջև ծառացած նոր մարտահրավերներով, խնդիրներով ու պահանջներով, որոնց բավարարման համար շատ կարևոր է ճիշտ կազմակերպված աշխատանքը, որտեղ ուսուցիչը կարողանում է լուծում տալ շատ խնդիրների, զարգացնում է իր մանկավարժական որակները, ձեռք է բերում բազմաթիվ նոր ու պահանջված կարողություններ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել ուսուցչի համագործակցության վերաբերյալ առկա տեսական նյութերը:

2. Գործնականում կիրառել համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

3. Կատարել արդյունքների ամփոփում, կազմել վերլուծություն, եզրակացություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ զգալիորեն բարձրացնում է մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդներն են՝ դիտում, զրույց-քննարկում, համեմատում:

Հետազոտության ընտրանքը՝ ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ

Գլուխ 1 . Համագործակցությունը՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման միջոց։

1.1. Ուսուցչի համագործակցության ընդհանուր բնութագիր։

Համագործակցությունը մի գործընթաց է, որի ժամանակ հիմնախնդիրը (պրոբլեմ) տարբեր տեսանկյուններից ըմբռնող կողմերը կարողանում են կառուցողական կերպով ուսումնասիրել իրենց տեսակետների տարբերությունները և փնտրել այնպիսի լուծումներ ,որոնք ավելի ընդունելի են ու իրատեսական , քան հնարավոր արդյունքի վերաբերյալ իրենց սեփական տեսակետը։

Համագործակցություն նշանակում է՝

1. Արդունավետ շփման հաստատում և զարգացում,
2. Հարգանք միմյանց գիտելիքների , կարողությունների ,հմտությունների և ունակությունների նկատմամբ,որոնք յուրաքանչյուրը ներդնում է ուսուցման գործընթացի մեջ,
3. Մասնակիցների կողմից ընդունված ընդհանուր հայեցակետի առկայություն,
4. Սերտորեն համագործակցելու պատրաստակամություն ՝ թիմի բոլոր անդամների հետ,
5. Խնդիրները համագործակցված լուծելու ուղղությամբ տարվող համատեղ աշխատանք,աշխատանքային խմբի անդամների միջև որոշակի դերերի և պատասխանատվության բաշխում և համատեղ մասնակցություն։

1.2. Համատեղ դասավանդումը՝ որպես համագործակցության մոդել։

Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա(Shumway, 2011)։

Ներառական կրթության հաջողությունը պայմանավորված է բազմաթիվ մակարդակներում համագործակցությամբ։ Թեև բազմամասնագիտական թիմերը կարևոր են երեխային կրթության մեջ ներգրավելու համար՝ ներառումը լավագույնս իրականացնելու, երեխաների ու նրանց ընտանիքների կարիքները հաշվի առնելու հարցում առավել կարևոր է դասարանում առկա համագործակցությունը։ Բարեհաջող կրթական միջավայր ստեղծելու կարևոր նախապայման է դասավանդմանը մեկ այլ տեսակետից մոտենալը։ Դպրոցի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ապահովում է ուսումնառության առավել հաճելի միջավայր՝ լավագույնս բավարարելով ուսման ամենատարբեր կարիքներ ունեցող երեխաներին անհրաժեշտ պայմանները։ Ներառական դասարաններում բոլոր երեխաներին ամենաարդյունավետ կերպով դասավանդելու համար կիրառվում է մի մոտեցում, որը հայտնի է որպես համատեղ դասավանդում։

Համատեղ դասավանդումը կարելի է իրականացնել մի քանի եղանակով:

Համատեղ դասավանդումը մանկավարժների կամ այլ մասնագետների գործընկերությունն է՝դասարանի ներսում տարբեր կրթական կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելու համար: Ներառական համատեքստում այն նպաստում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ խարանի նվազեցմանը և բոլոր աշակերտների ուսուցման բարելավմանը: Միարժամանակ համատեղ դասավանդման զանազան մեթոդները աշակերտներին ընձեռնում է ուսումնառելու տարբեր հնարավորություններ՝ դասապրոցեսին հաղորդելով բազմազանություն և ստեղծագործականություն: Հանդիսանալով ներառական կրթության հիմնական արդյունավետ բաղադրիչ, համատեղ դասավանդումը ներառման իրականացման պարտադիր պահանջ չէ:

Համատեղ դասավանդման եղանակները

Համատեղ դասավանդում կարելի է իրականացնել մի քանի եղանակով: Կարևոր է, որ եղանակն ընտրվի ուսուցանվող նյութի բովանդակության պահանջներին և երեխաների կրթական կարիքներին համապատասխան: Եղանակի ընտրության հարցում կարևոր գործոններ են նաև մանկավարժական կադրերը և ժամանակը: Ստորև ներկայացված հինգ եղանակների հիման վրա ուսուցիչները լծվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատականացված նպատակների և խնդիրների իրագործմանը՝ միաժամանակ բավարարելով դասարանի մյուս աշակերտների կրթական կարիքները:

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

1. Աջակցող դասավանդում

2. Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,

3. Զուգահեռ դասավանդում,

4. Այլընտրանքային դասավանդում,

5. Թիմային դասավանդում

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

• սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,

• ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,

• մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում

Կիրառման մոդելն ընտրվում է ուսուցանվող թեմային և սովորողների բազմազանությանը համապատասխան: Մոդելներն ընտրվում են՝ հաշվի առնելով նաև, թե ովքեր են համատեղ աշխատելու, քանի որ դասավանդող ուսուցչի հետ համադասավանդող կարող է լինել ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, լոգոպեդը, այլ առարկայական ուսուցիչները, ինչպես նաև ծնողները կամ սովորողները՝ հիմնականում բարձր դասարաններից : Տարբեր երկրներում կիրառվող համատեղ դասավանդման մոդելները բազմազան են, դրանք բոլորն էլ նպաստում են դասարանի կրթական մակարդակի բարձրացմանը, արդյունավետ ուսումնառության ապահովմանը և խթանում են սովորողների ակտիվ մասնակցությունը (Conderman, 2011):

1.3. Ուսուցչի օգնականը՝ որպես համատեղ դասավանդող: Ուսուցչի օգնականի համագործակցությունն ուսուցչի և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ :

Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնում ուսուցման նոր ռազմավարության `համատեղ դասավանդման կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին: Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառության դժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում): Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջ ժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում (Basso, McCoy, 2007): Համատեղ դասավանդման հիմնական բաղադրիչն առնվազն 2 դասավանդող մասնագետների համագործակցված աշխատանքն է, որը ներառում է սովորողների բազմազանություն, դասի պլանավորում, համատեղ դասավանդում, գնահատում՝ ամբողջ դասաժամի օպտիմալ կիրառմամբ: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների

համար ծրագրային նյութի յուրացման ավելի մեծ հնարավորությունների ընձեռում և այլն (MacDougall, 2017):

Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար.

- համագործակցության հմտությունների ընդլայնում
- դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,
- դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում , որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,
- դասաժամի օպտիմալ օգտագործում,
- սովորողների կրթական կարիքների բավարարում,
- աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,
- անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,
- միջավայրային խոչընդոտների թիմային հաղթահարում,
- դասարանի առաջադիմության ապահովում,
- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաչանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում (Shumway, 2011):

Ուսուցչի օգնականը համագործակցում է համապատասխան մասնագետների և ուսուցիչների հետ՝ մասնակցելով ստորև ներկայացված գործընթացներին.

• դպրոցական մակարդակի գնահատում,

• կանխարգելիչ միջամտությունների պլանի մշակում,

• ԿԱՊԿ-ի տարածքային մակարդակի գնահատում,

• ԱՈԻՊ-ի մշակում և վարում,

• մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում,

• համագործակցություն ծնողի հետ:

Ուսուցչի օգնականի համագործակցությունը կրթական գործընթացին մասնակից բոլոր օղակների հետ ենթադրում է համատեղ աշխատանք, որը միտված է ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացմանը՝ դասավանդման ճկուն և բազմազան մեթոդների, այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառման, անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակման միջոցով: Հարկ է նշել, որ այդ համագործակցությունը չի սկսվում և ավարտվում կողք-կողքի իրականացվող աշխատանքով: Միասին պլանավորելով և համաձայնության գալով այն աշխատանքների շուրջ, որոնք անհրաժեշտ է իրականացնել յուրաքանչյուր դասարանի, կոնկրետ սովորողի կամ սովորողների խմբի հետ՝ ուսուցչի օգնականն արդեն սահմանված նպատակների շրջանակում իրականացնում է աշխատանքներ դասամիջոցներին, գրադարանում, համակարգչային սենյակում և այլն՝ ապահովելով

ուսուցչի և աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների կողմից իրականացվող աշխատանքների շարունակականությունը:

Ուսուցչի օգնականի գործառույթները

ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականը, ուսուցիչների հետ համագործակցելով, իրականացնում է սովորողների կատարողականության դիտարկում և այս կամ այն պատճառով առաջացած դժվարությունների վերհանում: Հիմք ընդունելով հավաքագրված տեղեկատվությունը՝ ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

• դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈԻՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում: • Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:

• Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը:

3 «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀկառավարությանորոշում N 1391-Ն 15 | էջ
«Ուսուցչի օգնականի ձեռնարկ» մեթոդականուղեցույց ՀՄԿ

• Ուսուցիչների և մանկավարժահոգեբան ականաջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանա մանկավարժական խնդիրների բացահայտում:

• Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ:

Համագործակցությունը ծնողների հետ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմի արդյունավետ թիմային աշխատանքը և համագործակցությունը ծնողների հետ շատ կարևոր է, քանի որ դա է հանդիսանում դպրոցի անխափանա շխատանքի, արդյունավետ կրթության և դաստիարակության իրականացման հիմքը: Արդյունավետ կրթական գործընթացի

հիմքում ընկած է համագործակցությունն այդ գործընթացին մասնակից բոլոր օղակների միջև, ինչը նպաստում է ինչպես ուսուցման, այնպես էլ ուսումնառության որակի բարձրացմանը, բոլոր երեխաների կրթական կարիքների բավարարմանը:

Ուսուցչի օգնականի համագործակցությունն մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ

Անհատական ուսուցման պլանավորման և իրականացման գործընթացում կարևոր դեր ունեն նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները: Նրանց կողմից իրականացվող աշխատանքները խթանում են սովորողի՝ իր կարողությունների և հնարավորությունների սահմանում մասնակցությունը կրթական գործընթացին:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները մասնակցում են

.սովորողի անհատական ուսուցման պլանի մշակմանը

.ապահովում են ԱՈՒՊ –ով սովորողի համար սահմանված նպատակների հաղթահարումը, անցկացնում է խմբային և անհատական պարապմունքներ:

.տեղեկություններ է տրամադրում սովորողի ուժեղ կողմերի և դժվարությունների վերաբերյալ նրա ծնողին , ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական թիմի մյուս անդամներին:

Ուսուցչի օգնականը, որպես դիտարկում իրականացնող անձ, համագործակցելով դասվար/դասղեկի, դասավանդող այլ ուսուցիչների, դպրոցի մանկավարժահոգեբանակ անաջակցության խմբի և սովորողի ծնողների հետ՝ որոշակի ժամանակահատվածում, դիտարկման մեթոդի միջոցով, հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն սովորողի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերությունների, միջավայրային հարմարեցումների և այլնի մասին: Այդպիսի տեղեկատվություն հնարավոր է հավաքագրել միայն օբյեկտիվ դիտարկում իրականացնելու միջոցով՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը սովորողի նկատմամբ:

Համագործակցություն ուսուցիչների հետ

Երկրորդ դասարանում համագործակցելով ուսուցչի հետ, անցկացնում ենք համատեղ դասավանդում, որի ընթացքում աշխատում ենք վարքային խնդիր ունեցող աշակերտի հետ՝ փորձելով ինտեգրել աշակերտին դասապրոցեսում և ապահովել դասընկերների հետ շփումը:

Կիրառում ենք համատեղ դասավանդման այլընտրանքային և թիմային դասավանդման մոդելները, փորձելով աշակերտի համար ստեղծել ներդաշնակ միջավայր՝ ինտեգրվելու նպատակով:

Հաշվի առնելով աշակերտի նախասիրությունները և ընդգրկման ոլորտներտը, ցուցաբերում ենք անհատական մոտեցում:

Գրավոր աշխատանքների ժամանակ ելնելով աշակերտի կարողություններից ՝աշխատանքը կազմակերպվում է անհատական՝ միարժամանակ ներառվելով դասարանական աշխատանքներին:

Սիրում է երբ խրախուսվում է, կատարվում է ձևավորող գնահատում:

Հայտորոշիչ աշխատանքների ժամանակ զգում է անհատական մոտեցման կարիք:

Ժամանակ առ ժամանակ խորհրդակցելով մասնագետների (հոգեբանի,դասավանդող այլ ուսուցիչներ, ծնող) հետ, կարողանում ենք հասկանալ տվյալ աշակերտի հիմնական խնդիրը և համապատասխան լուծում գտնել: Այդ իսկ պատճառով ես միշտ կապի մեջ եմ լինում բոլոր մասնագետների հետ:

Գլուխ 2. Համատեղ դասավանդման գործնական կիրառում ՝ որպես համագործակցության մոդել:

Ուսումնասիրման նպատակը՝ բացահայտել համագործակցության առավելությունները՝ համատեղ դասավանդման մոդելներով:

Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում իրականացված համատեղ դասավանդման փորձեր:

Այն իրականացվել է հետևյալ քայլարշավով:

1. Համատեղ քննարկել ենք, թե ինչպես ենք բաշխելու մեր անելիքները դասապրոցեսում, քննարկել ենք մեր տեսակետներում առկա ընդհանրություններն ու տարբերությունները:
2. Ծանոթացել ենք տվյալ դասարանում սովորող սովորողների կրթական կարիքներին և համաձայնության ենք եկել անհրաժեշտ պայմանների ապահովման շուրջ:
3. Համատեղ դասավանդման առաջին օրվանից սովորողներին ներկայացել ենք որպես գործընկերներ՝ յուրաքանչյուրս մեր լիազորություններով:

4. Խորհրդակցել ենք առօրյա հարցերի շուրջ: Օրինակ՝ քննարկել ենք մեր ակնկալիքները համատեղ դասավանդումից, խոսել ենք հնարավոր առավելությունների և թերությունների մասին :
5. Իրականացրել ենք համատեղ պլանավորում և դասի վարում:

Դասի պլան

Ուսուցիչ՝ Մելքումյան Թեհմինե,

Առարկա՝ մայրենի

Դասարան՝ 3-րդ

Դասիթեման՝ Առակի ծնունդը

Դասի նպատակը	Կարևորդրույթներ	Անհրաժեշտ նյութեր
• Զարգացնել հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունը, վերլուծական կարողությունները, իմացական գործընթացները: • Ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները:	• Լինենք ազնիվ, լինենք բարի, որ աշխարհն էլ խաղաղ լինի: • Ապրենք այնպես, որ լռենաշխարհի բոլոր զենքերը:	• Ժպիտ-գնդակ • Պատմություն • Աղավնունկարներ

Դասի վերջնարդյունքները /Սովորողը պետք է…/
• Խոսի մարդկանց միջև ծագող անհամաձայնությունների լուծման եղանակների մասին: • Հոգտանիշրջապատիմարդկանցհետդրականփոխհարաբերություններիձևավորմանմասին: • Տեսնիուգնահատիբարինումարդկայինը: • Արտահայտիսեփականտեսակետը: • Պահպանիհայերենիուղղախոսականկանոնները, բառերիուղղագրությունը: • Գտնիբացատրությանկարիքունեցողբառերիիմաստը:
Դասարանի, դասինախապատրաստում
Սեղաններինլինենմայրենիիդասագրքերը, տետրերը, բառատետրերը:
Գնահատում
Իրականացնել ձևավորող գնահատում՝համեմատելով սովորողի այսօրվա պատասխանը երեկվա պատասխանի հետ և խոսել, թե ինչ ակնկալիք ունենք նրա վաղվա պատասխանից /բնականաբար՝ավելի լավ պատասխանի ակնկալիքով/:
Դասիսկիզբ – 5րոպե

- Ինչպիսի՞ տրամադրությունունենք:
- Պատրա՞ստենքդասին:
- Ի՞նչէրհանձնարարված:
- Այսօրմենքկիմանանքնաև, թեինչպես է ծնվելառակը:

Հինդասիհարցում – 15րոպե

- Արտահայտիչարտասանողաշակերտներիցմեկըգրատախտակիմոտարտասանումէբանաստեղծությունննամբողջությամբ:
- Մյուսաշակերտներնարտասանումենշարունակելով /սահնարավորությունէտալիսժամանակխնայել/:
- Արտասանելուցհետոյուրաքանչյուրաշակերտաշխատումէգրատախտակին՝կատարելովնախօրոքգրվածառաջադրանքներից:
- Հինդասիհարցումնավարտելուցհետոհամատեղ /դասարանիմիջոցով/ ստուգվումենգրատախտակինգրվածառաջադրանքներիճշտությունը՝միաժամանակկատարելովձևավորողգնահատում:

Նորնյութիմատուցում – 10րոպե

- Կարդալնախապատրաստածպատմությունը*:
  - Ձեզդու՞րեկավ:
  - Կցանկանա՞ք՝ մենքէլմիմյանցկրակենքժպիտով:
    - ❖ Ֆիզկուլտ – դադարժպիտ – գնդակով:
  - Այսպատմությունը և մերդասըմեզի՞նչենսովորեցնում:
  - Ի՞նչն է համարվումխաղաղությանխորհրդանիշ:
  - Ձերկարծիքովէլի՞նչըկարող է լինելորպեսխաղաղությանխորհրդանիշ:
  - Եթեդուքկախարդականփայտիկունենայիք, ի՞նչկանեիք, որաշխարհումխաղաղությունլիներ:
  - Այսպիսով՝ մենքհասկացանք, որպետք է…
    - Լինենքազնիվ, լինենքբարի, որաշխարհնէլխաղաղլինի:
    - Ապրենքայնպես, որլռենաշխարհիբոլորզենքերը:
- ՛՛Տանկըթանգարանում՛՛ ստեղծագործությունըի՞նչժանրիստեղծագործություն է:
- Ստեղծագործություններիէլի՞նչժանրերգիտենք:
- Ինչպե՞սենքանվանումբանաստեղծություն /հեքիաթ, առակ/ գրողին:
- Ո՞րառակագիրներիստեղծագործություններնենմեզծանոթ:
- Իսկդուքգիտե՞ք, թեինչպես է ծնվելառակը:
- Այսօրվամերդասըայդմասին է:
    - ❖ Ֆիզկուլտ – դադար՝ երգել ՛՛Տարեդարձ՛՛ երգը:

Ուղղորդվածաշխատանք – 10րոպե

- Բացենքէջ 56-ընկարդանք՛՛Առակիծնունդը՛՛:
  - ✓ Պատասխանելսովորողներիանհասկանալիհարցերին:
  - ✓ Նորդասըմեկանգամշարունակելովկարդումենվարժընթերցողները:
- Առաջինմասըսովորելվարժ, սահուն և արտահայտիչկարդալ:
  - ✓ Տնայինաշխատանք: Գրելնամակթագավորին և նրանխորհուրդտալվարվելայնպես, որնրաթագավորությունումտիրիսեր և բարություն:

✓ Բառատետրերումգրել /դասարանում/ ուղղագրականարժեքունեցող և բացատրությանկարիքունեցողբառերը:
Ինքնուրույնաշխատանք – 5րոպե
Տեքստիցդուրսգրելմեկականգոյական, ածական, բայնգրելդրանցտրվողհարցերը:

Դասապրոցեսին մասնակցում էր նաև ուսուցչի օգնական Նաիրա Գրիգորյանը, ով համապատասխան աջակցություն էր ցուցաբերում ԿԱՊԿՈաշակերտներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր ունեն աջակցության կարիք:

Համատեղ դասավանդման ժամանակ ուսուցչի օգնականի իրականացրած գործառույթները:

Բառային աշխատանքի ժամանակ օգնում էի ԿԱՊԿՈՒ աշակերտին որպեսզի անսխալ գրի ուղղագրությունը:

Ըստ կարիքի դասի թեման հարմարեցնում էինք ԿԱՊԿՈՒ աշակերտի կարողություններին, այդպիսով ապահովելով նաև ԿԱՊԿՈ երեխաների ներառումը դասապրոցեսին: ԿԱՊԿՈՒ երեխաների հետ հիմնականում աշխատում ենք համատեղ դասավանդման այլընտրանքային մոդելով երբեմն նաև զուգահեռ:

Դասի ընթացքը առավել սահուն կազմակերպելու համար օգնում էի ուսուցչին՝ օժանդակ նյութեր տրամադրելով:

Նոր դասի մատուցման և դասի հիման վրա առաջադրանքների հանձնարարման ժամանակ, ուշադիր հետևում էի բոլոր աշակերտների աշխատանքին և օգնում աջակցության կարիք ունեցող երեխաներին, այսպիսով նպաստելով ուսումնառության որակի բարձրացմանը և նպաստելով, որ ուսուցիչը հնարավորինս օպտիմալ օգտագործի իր ժամանակը:

Երկրորդ դասարանում հաճախակի համագործակցում ենք ուսուցչի հետ տեխնոլոգիայի դասերին: Դասերը ընթանում են շատ ակտիվ և հետաքրքիր: Երեխաները շատ ոգևորված են աշխատում: Հիմնականում օգնում եմ երեխաներին (գունավոր թղթերով, ծեփամածիկով և այլ անհրաժեշտ նյութերով աշխատելիս) դասի թեմային համապատասխան աշխատանքներ կատարելու ժամանակ: Ուսուցիչը դանդաղ բացատրում է քայլերի հերթականությունը, որոնց ավարտին պետք է հասնենք թեմայի վերջնարդյունքին՝ օրինակ, ստեղծել գարնան տեսարան կտրարելով գունավոր թուղթ և ծեփամատիկով աշխատելով:

Ես ուսուցչին զուգահեռ օգնում եմ երեխաներին ճիշտ կատարել քայլերի հերթականությունը: Այսպիսով աջակցող դասավանդման արդյունքում ապահովում ենք բոլոր սովորողների ներգրավվածությունը և մասնակցությունը դասապրոցեսին և ժամանակը ավելի արդյունավետ ենք օգտագործում:

Համատեղ դասավանդման ժամանակ ուսուցիչների հետ փորձի փոխանակումը նպաստում է նաև ուսուցչի օգնականի մասնագիտական աճին:

Եզրակացություն

Այսպիսով, մանրամասնորեն ուսումնասիրելով ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով թեման և գործնականում համատեղ դասավանդում իրականացնելով՝ ՝ որպես համագործակցության մոդել, եկանք այն եզրահանգմանը, որ ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ զգալիորեն բարձրացնում է մասնագիտական գործունեության արդյունավետությունը։ Նախաձեռնելով համագործակցություն և իրականացնելով արդյունավետ թիմային աշխատանք կրթության մեջ ներգրավված բոլոր կողմերի հետ, հնարավոր է հասնել կրթության որակի բարձրացմանը։

Կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող բովանդակություն։

Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն։

Գրականության ցանկ

1.Ինչպես խթանել ներառումը դասարանում,Մեթոդական ձեռնարկ

2.Ներառական կրթության ռազմավարություններ, Դասագիրք

3, Ուսուցչի օգնականի ձեռնարկ, Մեթոդական ձեռնարկ

4. Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում 2013 Հեղինակներ՝ Սորոբ Խաչատրյան, Սիլվա Պետրոսյան, Գայանե Թերզյան

5.lib.armedu.am